Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 21.10.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Աթանեսյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա.Դունամալյանի
Պ. Թադևոսյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական իրավունքի բաժնի 7-րդ, 29-րդ, 30-րդ և քաղաքացիական դատավարություն բաժնի 2-րդ, 10-րդ, 11-րդ և 25-րդ հարցերը:

Քաղաքացիական իրավունքի բաժին

Հարց 7

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի կարգավորումներից բխում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապացույցների նախնական ապահովում իրականացվում է ապացույցների ներկայացման դժվարությամբ պայմանավորված, հետևաբար Հավակնորդի ընտրած տարբերակը չի կարող ճիշտ համարվել:

Հարց 29

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով, մինչդեռ հավակնորդի կողմից ընտրվել է վերոգրյալ իրավակարգավորմանն ուղղակիորեն հակառակ տարբերակ:

Հարց 30

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225.9-րդ հոդվածով և հավակնորդի կողմից ընտրվել է սխալ պատասխան:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 2

Created With Tiny Scanner

Նշված հարցի վերաբերյալ բողոքը հիմնավոր չէ, քանի որ ընտրված տարբերակում առկա է նաև քրեական գործով դատարանի օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստերի նախադատելիության մասին նշում /որևէ սահմանափակում նշված չէ/, իսկ քրեական գործերի դեպքում առկա է սահմանափակում՝ նախադատելի կարող է լինել միայն որոշակի արարքի և դրանց կատարած անձանց վերաբերյալ փաստերը:

Հարց 10

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածով, որտեղ նշված է, որ գործին մասնակցող անձը գրավոր առարկությունը պարտավոր է առաջին ատյանի դատարան ներկայացնել մինչև նախնական դատական նիստի ավարտը, ինչ վերաբերում է Հավակնորդի այն փաստարկին, որ ապացուցման պարտականությունը բաշխելու վերաբերյալ որոշումը կայացվում է նախնական դատական նիստում, հետևաբար իր պատասխանը չի հակասում օրենսդրական կարգավորումներին, անհիմն է, քանի որ նախնական դատական նիստի ավարտը չի համընկնում ապացուցման պարտականությունը բաշխելու վերաբերյալ որոշում կայացնելու հետ, իսկ այդ որոշումը կայացնելուց հետո դատարանը մինչև նախնական դատական նիստի ավարտը կատարում է բազմաթիվ դատավարական գործողություններ:

Հարց 11

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասով և հավակնորդի կողմից ընտրվել է ակնհայտ սխալ պատասխան:

Հարց 25

Հավակնորդը նշված հարցի վերաբերյալ բողոքում կարողացել է հիմնավորել նաև իր ընտրած տարբերակի սխալ չլինելը, հետևաբար գնահատականն ենթակա է բարձրացման:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 2873 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի: Քաղաքացիական դատավարության բաժնից ստացված 20 միավորը բարձրացնել մեկ միավորով՝ արդյունքում արձանագրել 21 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Պ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Created With Tiny Scanner